

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի 9.1-րդ բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9.1.1. փոստային կապի գործունեության համար՝

9.1.1.1. փոստային կապի ծառայությունների գործունեության համար՝ տարեկան բազային տուրքի 3000-ապատիկի չափով.

9.1.1.2. միջազգային սուրհանդակային կապի ծառայությունների գործունեության համար՝ տարեկան բազային տուրքի 2500-ապատիկի չափով.

9.1.1.3. Ներհանրապետական սուրհանդակային կապի ծառայությունների գործունեության համար՝ տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով:

Սույն կետով սահմանված գործունեության երկու տեսակի կամ բոլորի միաժամանակյա իրականացման դեպքում կիրառվում է դրանց համար սահմանված պետական տուրքի դրույքաչափերից առավելագույնը»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից: